Ազգային ազատագրական շարժման 60-ական թվականներին սկսված փուլում (ընդհուպ մինչեւ 1987 թվականը) առկա էին երկու ուղղություն:

Առաջինը բացահայտորեն սկզբնավորվեց «յոթ հայրենասերների դատավարությամբ», 1964 թվականին (Խաչիկ Սաֆարյան, Վիգեն Բաբայան եւ ընկ.):

Այդ խմբի ձերբակալմամբ ընդհատված հայրենասիրական գործունեությունը շարունակեցին յոթ նոր անձինք, նոր կազմակերպություն հիմնելով եւ ձեռնարկելով «*Հանուն Հայրենիքի*» ամսագրի հրատարակումը:

Հայրենասիրական նոր խմբի յոթ անդամներից չորսը (Հայկ Իսկանդարյան, Աստուր Բաբայան, Գեւորգ Հեքիմյան, Սարգիս Թորոսյան) անմիջականորեն առընչված էին առաջին յոթնյակի հետ:

Ինչպես առաջին, այնպես էլ այս՝ մեր նոր յոթնյակը, բարձրացնում էր Ղարաբաղն ու Նախիջեւանը Հայաստանին վերադարձնելու հարցը, դատապարտում հայ եւ ընդհանրապես բոլշեւիկների հակազգային, հակահայկական քաղաքականությունը, քննադատում խորհրդային կոչված վարչաբյուրոկրատական համակարգը՝ այն համարելով կենսամերժ:

Նշածս յոթնյակի կազմավորման ժամանակներում ձեւավորվեց մեկ խմբավորում եւս՝ Հայկ Խաչատրյանի, Ստեփան Զատիկյանի եւ Շահեն Հարությունյանի նախաձեռնությամբ:

Այս խմբավորումը բարձրացնում էր Հայաստանի անկախացման հարցը:

Հետագայում, երբ երկու խմբավորումներն էլ բանտարկված էին, Մորդովիայի ու Սուիկամսկի քաղաքական գաղութներում տեւական վեճեր են եղել երկու ուղղությունների ներկայացուցիչների միջեւ, չնայած դա դույզն իսկ չի ստվերել մեր հարաբերությունները... Ստվերները հայտնվեցին շատ ավելի ուշ, երբ արդեն գնդակահարված էր Ստեփան Զատիկյանը...

Վաթսունական թվականներից սկսած առ այսօր մենք մեր տեսակետներն ու քաղաքական համոզմունքները չենք փոխել եւ դրանցում իր անեղծելի, սրբազան տեղն ունի հայ ժողովրդի անկախության իդեան: Հենց ա՛յդ պատճառով մի քանի մանկամիտ կողմնակիցներ ու քաղաքական «դիվիդենդներ» շահելու, որոշակի ուժերի հաճոյանալու ու վարձատրվելու, անձնական փառասիրական նկրտումները բավարարելու համար, պատեհ ու անպատեհ առիթներով չենք շահարկում այն: Լեւոն Տեր-Պետրոսյանի սիրած արտահայտությամբ՝ «տրիվիալ» ճշմարտություն է, բայց՝ստիպված եմ կրկնել. բոլոր արարածները ձգտում են ազատության: Ծավալին ա՛յն է, որ երեսպաշտները մարդ-արարածի այդ բնական ձգտումը միշտ չարաշահել եւ չարաշահում են, նորից օգտագործում են հենց նրա դեմ:

Մենք շա՛տ ավելի լրջորեն եւ իրո՛ք ենք անկախություն ուզում, ի տարբերություն ամեն օր միտինգներում այդ մասին գոռգոռացողների:

«Հայ Դատը» չի ուզում, որ անկախության խայծով մեր ժողովրդին տանեն կործանման:

Մի ժամանակ զինված կազմավորումներ ունեցող կազմակերպությունների միավորվելու փորձ արվեց, որ չկայացավ: Այդ առիթով հանդիպումներից մեկին ներկա գեներալ Սուրկովն այսպիսի մի պատկեր ներկայացրեց. «Ենթադրենք,- ասաց նա,- որ ձե՛ր ասած ռուսական զավթիչ բանակը դուրս է հանված Հայաստանից: Հայաստանը մոտ երեք հարյուր կիլոմետր երկարություն ունի: Թուրքական մարտական ուղղաթիռների տորմիղը մարտական թռիչքով այն կանցնի մոտավորապես մեկ-մեկուկես ժամվա ընթացքում: Դրանից հետո Հայաստանում կմնան միայն կիսահալ բանակներ...»:



Յ. ՎԱՍԻԼՅԱՆ.

«Ժողովուրդը հավիտենական գերարժեք է»

Մտորում է վաթսունականների քաղկալանավորը

Յանրաքվե

Լենինը 1918 թվականին ռուսական զորքերը ետ կանչեց Կովկասյան ռազմաճակատից եւ թուրքական բանակը մտավ Հայաստան:

Եթե Օզալի ականջին Գորբաչովը մի թեթեւ փսփսա... Արեւելյան Հայաստանը կարող է արժանանալ Արեւմտյանի ճակատագրին:

Ամերիկյան սենատի, Եւրախորհրդարանի եւ ամստերդամյան «ոչ պաշտոնական» հավաքի հայաստանյան «եղբայրությունը» հայտարարում է, թե Թուրքիան այլեւս 15 թվականի մարդակեր գազանը չէ, թե նա քաղաքակրթվել եւ անցել է խտով սնվելուն, այլեւս այդպիսի բան չի անի, եթե ուզենա էլ. ՄԱԿ-ն ու Եւրախորհրդարանը, ամենակարեւորը՝ ամերիկյան «ծանոթ» սենատորները, թույլ չեն տա...

Թվում է այս կերպ կարելի է խաբել մանկապարտեզի երեխաներին, բայց... համոթ մեզ՝ հավատացողներ կան: Ստիպված եմ նորից մի «տրիվիալ» հարց տալ «հավատացյալներին». ինչու՞ վերոհիշյալը չեն պաշտպանում Պաղեստինի արաբներին, Լիբանանին, ինչու՞ Կիպրոսից չեն վտարում զավթիչներին, որք են ներկայիս՝ «քաղաքակրթված» թուրքերը...

Ցոթանասուն տարի այս կայսրության ամենասարսափելի, անբարենպաստ պայմաններում ապրել ու դիմացել ենք, իսկ երբ հնարավորություն է ստեղծվում քիչ թե շատ տանելի պայմանների անցնելու, ապագա իրակա՛ն անկախության նախապայմաններ ստեղծելու, մեզ կոչ են անում դուրս գալ ու մնալ թուրքի, ադրբեջանցու «բարիկամնցողության» հույսին... Նման վարքագծի ջատագովներին ես չեմ կարող համարել հայ ժողովրդի բարեկամներ: Մեր այս չսիրած Խորհրդային Միության կազմում, արդեն նոր՝ ինքնուրույն կարգավիճակով, երաշխավորված է գեթ ժողովրդի ֆիզիկական գոյությունը:

Անկախությունը միտինգներում չի նվաճվում եւ ոչ էլ առ ի քրիստոս հղած աղոթքներով... Սիտինգներն ու աղոթքներն ամբոխին խաբելու համար են, ցանկալիի պատրանք ստեղծելու համար:

Բնութագրող է, որ խոսքով Արցախը Հայաստանի մաս հայտարարելու ջատագովները մի քանի ամիս հետո գնացին Մութալիբովի ու Օզալի հետ համաձայնության... Ե՞րբ էր Արցախն ավելի մոտ Հայաստանին. հայհոյված Վոլսկու կառավարման օրո՞ք, թե՞ այսօր... Անկախության գործընթաց հռչակելուց եւ միութենական հանրաքվեին չմասնակցելուց հետո չէ՞ր, որ Արցախը փաստորեն Ադրբեջանի կազմից դուրս բերող, այդտեղ հատուկ կառավարում մտցնող Գորբաչովը միանշանակ հայտարարեց, որ Արցախը Ադրբեջանի անքակտելի մասն է...

Նկատենք նաեւ, որ իշխանություն նվաճելուց հետո աստիճանաբար սառեց ՀՀՇ-ի անկախության կոչերի ջերմությունը: Դրանք այժմ խիստ ջերմացել են նրանց մոտ, ովքեր իշխանության գաթայից իրենց հավակնած բաժինը չեն ստացել:

Այո՛, մենք չափավորության, իրական հնարավորությունների ճանապարհով գնալու կողմնակից ենք: Այս առումով, թվում է, ավելի իրապաշտական է Լեւոն Տեր-Պետրոսյանի դիրքորոշումը:

Հայաստանն առայժմ պետք է մնա նոր ձեւավորվող Խորհրդային ինքնուրույն պետությունների տնտեսական, ռազմական ու քաղաքական համագործակցության կազմում, քանզի այլընտրանք չունի: Եթե անկախանալու հնարավորություն առաջանա, ոչ մի ժողովուրդ, ոչ մի վայրկյան չի մնա կախյալ, ինչ որոշումներ էլ ընդունեն միտինգներում, գերագույն խորհուրդներում ու «միավորումներում»:

1920 թվականին Ադրբեջանը շրջահայացորեն մի գիշերում «մուսավաթից» գունափոխվեց «բոլշեւիկի» եւ շահեց Նախիջեւանը, Ղարաբաղը: Այժմ, անկախանալու մեզնից անհամեմատ ավելի հնարավորություններ ունենալով, Մութալիբովը չի շտապում «փեշերը քշտել ու առաջ ընկնել», քանզի հասկանում է, որ այդ դեպքում կկորցներ ոչ միայն Արցախը...

Հասարակարգերը, կայսրություններն ու նվաճողները գալիս ու գնում են, իսկ ժողովուրդն իր շահերով՝ մնայուն, հավերժական գերարժեք է:

Հանուն դրա, ճարահատյալ հանդուրժում են նախորդ երեքը: □